

1586

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

809

5-98

Այ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅԻ ՄԻՋԻՆ
ԴԱՐԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ



1927

ԾԻ

809
5-98

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄՍԽՈՐԶ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ
ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱ-
ԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հաստատված է ԽՍՀՄ ժողովմասորհին
կից բարձրագույն դպրոցների գործերի
համաժողովենական կոմիտեյի կողմից

Մ Ր Ա Գ Ի Ր

ԱՐԵՎՏՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅԻ ՄԷՋԻՆ ԴԱՐԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ա. Միջնադարյան կուլտուրայի ընդհանուր գծերը

Ֆեոդալական իերարխիան և ֆեոդալական պետությունը:
Ցեղեղեցու դերը միջին դարերի կուլտուրայի պատմության մեջ:
Միջնադարյան գրականությունը և անտիկ ժառանգության խըն-
դիրը (անտիկ գրականության տրադիցիաները միջին դարերի
գրականության մեջ, IV—V դարերի հռոմեական գրականությունը
և վաղ միջնադարի լատինական գրականությունը), արևելյան
գրականությունների ազդեցության մասին: Արևմտյան Յեվրո-
պայի միջին դարերի գրականությունը և ուստական հին գրա-
կանությունը: Միջնադարյան գրականության պերիոդիզացիան:

Արևմտյան Յեվրոպան Հռոմեական կայսրության անկումից
հետո: Վաղ միջնադարի ժողովրդական եպոսը, նրա ծագումը և
զարգացումը: Կելտական եպոսը (Իռլանդական սագան (գրուցա-
վեպը) Կուխուլինի մասին և «Ֆանտաստիկական» սագաները),
սկանդինավյան սագաները, «Եդգան» և հեթանոսական դիցաբա-
նությունը, սկալդների պոեզիան. անգլո-սաքսոնական պոեմը
Բեովուլֆի մասին: Գերմանական հին եպոսը—«Յերգ Վալտեր
Ալվիտանացու մասին»:

բ. Վաղ միջնադարի լատինական գրականության ընդհանուր
ընդհանրացումը

Ցեղեղեցին վարպես «ֆեոդալական «կարգերի» ամենաբարձր
ընդհանրացում» (Ենգելս): Ասկետիզմ: Միստաստիկա և մի-



1764

40

Խմբագիր՝ Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Թարգ. Հ. ԹՈՒՄՅԱՆ

Տեխ. խմբ. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գլավրիտի լրագր. Ե.—1561, Պատվեր 40, տիպոժ 1200

Հանձնված է արտադրության 13 Հունվարի 1940 թ.

Մատրագրված է տպագրության 11 փետրվարի 1940 թ.

Թուղթ 60×43, ապագր. մամուլ 1,5, մեկ մամուլում 36,500 նիշ

Մանկ. Ինտախուսարի ապարան, Մարջոի փ. 17, Յերեվան 1940

տիկա: Հերձվացները և նրանց սոցիալական հիմքը: Վանքական դպրոցները և դպրոցյուն: Կարլոս Մեծի պալատական ակադեմիան: Ալիուհներ և «Կարողինգյան Վերածնունդներ»: Գրականությունը սպասարկում է յեկեղեցուն: Կրոնական պոեզիայի հիմնական ժանրերը՝ հիմներ, լեգենդներ սրբերի մասին, տեսիլներ, աստվածաշնչի վերաստեթյուններ (պերեֆրազներ), հուզեր դրաման, նրա ծագումը և զարգացումը: Գրական և ժողովրդական տարրերը դրամայում:

Վազանտների պոեզիան, նրա հակատոկեոսական բնույթը և հակալիերական մատիվները: Անտիկ տրագիդիաները վազանտների պոեզիայում: Անտիկ և ժողովրդական պոեզիաների ազդեցությունը վազանտների սանկտագործություն վրա:

գ. Ֆեոդալիզմի դարաշրջանի ժողովրդական եերոսական եպոսը

Նրա հիմունքները, կրողները, կատարման ձևը: Ժոնգլյորներ և շպիլմաններ: Ֆեոդալիզմի դարաշրջանի հերոսական եպոսի ծագման ընդհանուր պրոբլեմները: Ֆրանսիական հերոսական վիպերգությունների հիմնական ցիկլերը (բարոնական և կարողինգյան ցիկլեր): «Ռոլանդի յերգը» և կարողինգյան ցիկլի պոեմները: Գովերգումն՝ ասպետական սխրագործություն, հայրենասիրություն, սյուզերենի հանդեպ վասսալի ունեցած հավատարմություն: Ռազմական սխարագործությունների հերոսականը (героика): Պոեմի ժողովրդայնությունը: Պոեմի վոճը հասարակ է, ուժեղ և միաձուլը: «Ռասուլի յերգը» և բարոնական ցիկլի պոեմները: Իրականություն անդրադարձման բնույթը ֆեոդալական եպոսայի հերոսական վիպերգությունների մեջ: Իսպանիայի հերոսական ժողովրդական եպոսը և նրա ծագման հարցը: Պատմական շրջագրություն (обстановка) ատանձնատկություններն Իսպանիայում, վորը կոչում եր մավրերի դեմ իր անկախություն համար:

Ռոմաններ և պոեմ Սիդի մասին («Յերգիմ Սիդի մասին») Հերոսական ժողովրդական եպոսը Գերմանիայում: «Նիբելունգների յերգը» և նրա սյուժեատային արմատները: Կին սկանդինավյան յերգերը և սագաները (զրուցավեպերը) Ռուրզունգների կործանման և Սիգուրդի մասին. ժողովրդական

և ասպետական (կուրտուազական) գծերի զարգացումը պոեմի մեջ: «Գուրուն» պոեմի կերպարների և վոճի վերլուծությունը, Դիտրիխ Բերնացու ցիկլը:

դ. XII—XIII դարերի ասպետական (կուրտուազական) գրականությունը

Ասպետական կուրտուազայի ծագումը XII—XIII դարերում: Սաչակրաց արշավանքները: Քաղաքային կուրտուազայի ազդեցությունը: Ազնվականությունը և պարանքային-դրամական հարաբերությունների զարգացումը: Պրովանսը և նրա դերը ասպետական լիբիկայի զարգացման մեջ: Տրուբադուրների պոեզիան (Բերնարդ դե-Վենաադորն, Զաուֆրե Ռյուզել, Բերտրան դե-Ռորն և ուրիշները) և նրա ծագումը: Կապը ժողովրդական լիբիկայի և վազանտների լատինական պոեզիայի հետ, արաբական և անտիկ պոեզիայի ազդեցությունը (Ավիզիոս): Ենգելսը պրովանսալյան պոեզիայի հախայկություն նշանակություն մասին: Պրովանսալյան լիբիկայի հիմնական ձևերը՝ կանցոն, ալբա, տենսոններ, սիրվեաններ և այլն: Սաչակիրների յերգերը: Ասպետական լիբիկան ֆրանսիայում (տրուվերներ) և Գերմանիայում (միննեզինգերներ): Վալտեր ֆոն դեր-Ֆոդեբլեյդե, ժողովրդական և հակապապական մատիվները նրա պոեզիայում: Նրա պոեզիայի մատիվությունը վազանտների և շպիլմանների լիբիկային:

ե. Կուրտուազական (ասպետական) վեպի մեկնումը

Նրա վոճը և թեմատիկան: Կուրտուազական վեպի աշխարհիկ բնույթը: Աշխարհիկ գգայական վայելքի գովերգությունը անհատին հաստատող ինդիվիդուալիզմը՝ ի հակադիս յեկեղեցու ասկետություն, «Լիուջն սպասավորելը», քաղաքավարություն, Հոգեբանական վերլուծություն սաղմերը: Կուրտուազական վեպի հեքիաթային-ֆանտաստիկ տարրը: Անտիկ և բյուզանդական սյուժեաներով պոեմներ ու վեպեր («Ռոտիդի» վերածնունդը զրույցներ Տրոյայան պատերազմի մասին, Սլեքսանդր Մակեդոնացու մասին, «Միլի և Բլանշեֆեր», «Ոկասան և Նիկոլետոս» մյուսները): Կերական եպոսի սյուժեաները մշակող վեպի

Արտուր թագավորի կամ «Կլոր սեղանի» ասպետների ցիկլը): Կրնդյնն զե- Տրուայի, Գոտֆրիդ Ստրասբուրգացու և Հարոման Փոն Աուգի ստեղծագործությունները: «Վեպ Տրիստանի և Իզուդայի մասին», նրա կազմի և զարգացման վերլուծությունը: «Սուրբ Գրալի» ցիկլը և նրա ասպետական-միտոլի մոտիվները (Վոլֆրամ ֆան Եշենբախի «Պարսիֆալը»): Կուրտուազական վեպի կերպարանափոխությունը XIV—XV դարերում, նրա վերածվելը գեղեցիկաճաշակ գրականություն:

գ. Բաղաձևների վերելքը խաչակրաց արշավանքների շրջանում

Բաղաձևների պայքարը ֆեոդալների դեմ: Բյուրգերական գրականության առաջնաւը և նրա ռեալիստական բնույթը: Սատիրական և պարոդիական գրականությունը զարգացումը՝ XIII—XV դարերում: Բյուրգերական գրականության ժանրերը: Ճաբլոներ և շվանկներ: Սատիրական ազվեսավիպը և նրա զարգացման եռապները: Հրապարակախոսական պոեզիա (Ռյուսարոֆ և ուրիշները): Մայսերդանգ (արհեստավորական ցեխերի պոեզիան Գերմանիայում): «Վեպ վարդի մասին» աշխատություն I և II մասերը և յիջին դարերի այլաբանական (ալեգորիական) պոեզիան: Առ շրջանի յեկեղեցական դրաման արհեստավորական ցեխերի (համաքյարությունների) ձեռքում: Միտերերիաներ և միբակլիները: Աշխարհիկ դրամատիկական ժանրերի զարգացումը. մորալիտե, ֆարսեր, ուսեր (սատիրական պիեսները Ֆրանսիայում XIV—XV դարերում), ֆրանսիական ֆարսը—«Փաստաբան Պատրիսը»: Բյուրգերական գրականության ռեալիզմի սահմանափակությունը:

է. Անցումը դեպի վերածնության դարաշրջան

Իտալիան XIII—XIV դարերի սահմանազծում: Գվելֆների և գրեյֆների պայքարը: Մլորենցիան վորպես նոր կուլտուրայի ոջախ Դանտեի «միջին դարերի վերջին և նոր ժամանակների առաջին պոետի» (Ենգելս) ստեղծագործությունը: Դանտեյի կյանքը և ստեղծագործական զարգացումը: Լիրիկայի գերբը—«Նոր կյանք» և նրա կապը «նոր քաղցր վոճի» պոեզիայի հետ (Գվինցիլի, Կավալկանտը): «Մնջույթ» և ժողովրդական լեզվի մա-

սին» տրակտատները: Իտալական ժողովրդական լեզվի ապուզիան (Չասագուլուսթյունը) («Դա՛ գարու հաց ե, վրբով պիտի կշտանան հագարավորները»): Դանտեն և Հենրիխ VIII-ի Իտալական ուրշավանքը: Կոյսերների պաշտպանությունը, պամֆլետներ, «Միապետություն մասին» տրակտատը: Դանտեյի գրեյֆինյան դպրախարհերը: Դանտեյի խոշորագույն ստեղծագործությունը՝ «Աստվածային կատակերգությունը» վորպես միջնադարյան կուլտուրայի փրկիսոփայական-գեղարվեստական հեյակապ սինթեզ և նոր ժամանակների գրականության նախըզանք (պրոլոգ): «Աստվածային կատակերգություն» կապը յեկեղեցական-վանական գրականության (պետիչներ) և այլաբանական (ալեգորիական) պոեզիայի հետ: Դանտեյի քննադատական վերաբերմունքը դեպի պաշտոնական յեկեղեցին (յերգիծանք պապություն դեմ) և նրա մոտիկությունը վաղ Ֆրանցիսկյանական հերետիկոսական միտալիցիզմին: Հործակումներ փողի քսակի իշխանություն դեմ: Հենրիխ VII ապոլիտոզը (աստվածացումը), արհամարհանք՝ դեպի փոքրոգիները, պայքարից և փորձություններից վախեցողները: Պոեմի կրքոտ և պաթետիկ լեզուն:

Հեռաքրքրությունը դեպի մարդը և աշխարհը: Ժողովրդական կյանքի պատկերները: «Հեթանոսական հնություն (անտիկություն) մեծարումը Դանտեն վորպես պորտբեռի և պեյզաժի շնորհալի վարպետ: Դանտեյի պոեմի համաշխարհային նշանակությունը: Մարքսի գնահատականը Դանտեյի մասին:

ՎԵՐԱՏՆՈՒՅՅԱՆ ԳԱՐԱՇՐՋԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերածնությունը զարաշխումը վորպես պորոչեստիվ մեծագույն հեղաշրջում, վոր վերապրելիք մինչ այդ մարդկությունը (Ենգելս): Բուրժուական հարաբերությունների զարգացման բնկըրնավորությունը՝ նոր բուրժուական կուլտուրան: Հումանիզմ և նրա սոցիալակոս արմատները: Հումանիզմի պայքարը ֆեդալիզմի դեմ: «Աշխարհի և մացուռ» հայտնագործումը: Անտաշխարհի հայտնագործումը և դեպի անտիկ աշխարհը կատարված շրջադարձի սոցիալ-առաջադիմական իմաստը: Հումանիզմը

և ժողովրդական կուլտուրան: Հումանիզմը վորպես հասարակական կուլտուրայի զարգացման պատմություն մեջ: Արվեստի և գրականության փառահեղ ծաղկումը: Վերածնության դարաշրջանի կուլտուրայի բնույթը: «Բուրժուազիայի ժամանակակից տիրապետությունը հիմնով մարդիկ ամեն ինչ էյին, բայց վնչ յերբեք բուրժուական սահմանափակներ» (Ենգելս):

1. Վերածնությունը Իտալիայում (XIV—XVI դարեր)

Իտալիան XIV—XVI դարերում: Իտալիայի տնտեսական զարգացումը կապված Միջերկրական ծովի առևտրի հետ: Իտալիայի բաժանվածությունը: Բազալական կառույցվածքը և սոցիալական պայքարը: Կաթոլիկական յեկեղեցու անկումը: «Հակառեֆորմացիան» և տնտեսական կյանքի զեզրադացիան (քայքայումը) XVI դարում: Վերածնության շրջանի իտալական գրականության զարգացման հասպները: Ռենեսանսի սկիզբը և Պետրարկայի ստեղծագործությունները (XIV դար): Պարարկայի «Ներքին զժողովույնները» և նրա աշխարհայացքի հակասությունները: Պետրարկան վորպես առաջին յեվրոպական հումանիստը: Պարարկայի լիրիկան և նրա նշանակությունը յեվրոպական լիրիկայի զարգացման համար: Պետրարկայի լատինական տրակտատները և «Աֆրիկա» պոեմը:

Բոկաչիո, նրա ստեղծագործական զարգացումը: «Իեկամերոնը» վորպես իտալական վաղ վերածննդի ռեալիստական գրականության ամենաբարձր նվաճում: «Իեկամերոնի» սատիրան և նրա հակադերական համակվածությունը: Սլրո հումանիստական մեկնաբանությունը, մարմնի ազատագրումը: Բոկաչիոն վորպես նովելլայի ստեղծող: Բոկաչիոյի գրական վարպետությունը: «Իեկամերոնի» գործած ազդեցությունը յեվրոպական գրականության վրա: Բոկաչիոյի «Փիամետտան» վորպես առաջին ռեալիստական հոգեբանական վեպ: Բոկաչիոյի մյուս վեպերը և պոեմները: Նրա լատինական տրակտատները:

Կվատրաչենտոյի (XV դ.) շրջանի իտալական գրականությունը: «Հումանիզմի դարը»: Հումանիստական փիլիսոփայությունի ծաղկումը: Պոլո Բոչչոլինիի, Լորենցո Վալլայի և մյուսների տրակտատները և պանֆլետները: Պազանիզմը և իդեալա-

կան ձևի պաշտամունքը (Պոլեցիանո): Պոլոյի «Փացետիները», Պոլեցիի «Մորգանտեն» և սոպետական վեպի ճակատագիրը Իտալիայում XV—XVI դարերում: Բոյարդոյի «Միրանարված Ռոլանդ» պոեմը և Արիոստոյի «Կատաղի Ռոլանդը»: նրանց ստեղծագործությունների արխատկրատական տեղեկանքները: Արիոստոյի պոեմի հումանիստական էլեմենտները: Ռեալիզմը և Փանտաստիկան Ռենեսանսի (Վերածնության) գրականության մեջ:

Տասսոյի «Ադատագրված Յերուսաղեմը» և ուշ Ռենեսանսի դարաշրջանը: Պեմի ստեղծման պատմությունը: Կրոնական թեմատիկայի մշակումը: Հումանիզմի ճգնաժամը: Պոեմի հերոսական էլեմենտը: Պայքարը «անհավատների» դեմ և այդ թեմայի տկտուալ (հրատաղ) լինելը: XVI դարի Իտալիայի համար (թուրքերի արշավանքը դեպի հարավային Յեվրոպա): Հովվերգական պոեզիայի զարգացումը (Մանագարոյի «Արկադիան», Տասսոյի «Սմինտան»): Այդ եպոսայի թատրոնը և դրաման: Գիտական կոմեդիան և «Կոմեդիա դել-արտեն»: Հումանիստական դրամայի պատմությունը: Մակիավելլու «Մանդրագորան»: Ջորդանո Բրունոն և նրա պայքարը ֆեոդալական կաթոլիկական սեպկիայի դեմ: Բրունոն իրրև գրող:

2. Վերածնությունը Գերմանիայում

Գերմանիայի զարգացման հատուկ պայմանները XVI դարում: Գերմանական հումանիզմի առանձնահատկությունները (նրա գերազանցապես հրապարակախոսական բնույթը): Յերկրի տնտեսական և քաղաքական բաժանվածությունը: Գյուղացիության տնտեսական և իրավական վիճակի վատացումը: Բյուրգերականություն և սոպետություն: Կաթոլիկության դեմ յեղած ոպոզիցիան: Ռեֆորմացիան և նրա զարգացումը: Ասպետական սպանաժողովույնները: Մեծ գյուղացիական պատերազմը: Քաղաքային պլերբյուրային շարժումը: Գերմանական հումանիզմի ըսկիզբը XVI դարում: Սերաստիան Բրանտի «Հիմարների նավը» սատիրան: Երազմ Ռոտտերդամցու ստեղծագործությունը և նրա «Հիմարության դովբը»: Ուլրիխ Փոն Հուտենի գրական դործունեությունը («Պաժարամիտ մարդկանց նամակները», սատիրական դիալոգներ): Միտոստիկայի ծաղկումը, պայքար պապական Հոմի դեմ: Գերմանական հումանիզմի հետագա բախ-

տը, նրա անկումը մեծ գյուղացիական պատերազմից հետո: Մ. Լյուտերը և նրա դերը գերմանական գրական լեզվի ստեղծման գործում (աստվածաշնչի թարգմանությունը): Գյուղացիական պատերազմները պոեզիան: Հանս Սակսի XVI դարի գերմանական բյուրգերություն խոշորացույն պոետի՝ ստեղծագործությունները: Նրա չափածո շվանկները, բարեկենդանային խաղերը (Փաստախաղաչիներ), մեյստերզինգերական յերգերը: Սակսի պոեզիայի և գրամատուցիայի ժողովրդական գծերը: Նրա յուժնորը: Սակսի սեպուղիները: «Տիլ Ռելենշպիգեր» և «Դոկտոր Փաուստի պատմությունը» — ժողովրդական գրքերը: Դոկտոր Փաուստի թեման և նրա վարդապետը համաշխարհային գրականություն մեջ: XVI դարի ժողովրդական լիրիկան:

Գերմանական գրականությունը XVII դարում: Յերեսնամյա պատերազմները և նրա արտացոլումը Գրինկենսուզենի ստեղծագործություններում («Միսպլիցիստիմուսի արկածները»): Գրիմելհանսուզենը և ժողովրդական գրականության տրագիկաները:

3. Վերածնությունը Ֆրանսիայում

Ֆրանսիան XV—XVI դարերում: Ֆրանսիայի սոցիալ-քաղաքական կարգերը XVI դարի սկզբին: Բացարձակ միապետությունը Ֆրանցիսկ I ժամանակ: Բուրբուան պատերազմները և պայքարը Կարլոս V կայսրության դեմ: Ֆրանսիական ռեֆորմացիայի և կրոնական հարածանքների սկիզբը: Կալվինիզմի հաջողությունները: Միապետության ճգնաժամը XVI դարի կեսին: «Կրոնական պատերազմներ»: Միջին դարերի վերջալույսը և Վերածնության նախապատրաստությունը XV դարի ֆրանսիական գրականության մեջ: Վիլյոնը և նրա լիրիկան: Ֆրանսիական Վերածնունդի գրականության ծաղկումը XVI դարում: Հուժանիզմի հրապարակ գալը: Մարգարիտ Նավարացու խմբակը: Հումանիստական և կալվինական գծերի միահյուսվելը Գլեման Մարոյի պոեզիայում: Դեպերյե, նրա հակակղերական սատիրան՝ «Աշխարհի ծննդան»: Ֆրանսիական հումանիզմի բարձր զարգացումը Ֆ. Ռաբլեյի ստեղծագործություններում: Նրա կյանքը և ստեղծագործությունները: «Դարգանտյուս և Պանագրյուել» վեպի հորինման պատմությունը: Սատիրա՝ ուղղված ֆեոդալիզմի

և սխոլաստիկայի դեմ, հումանիստական իդեալների հիմնավորումը (Տերմի աբրատությունը ուսուցիչական եպիգրամ և այլն): Ստեղծագործությունների մատերիալիստական և աթեիստական միտումները: Վեպի վոճը: Նրա կապը ժողովրդական գրականություն հետ: Ռաբլեյի սեպուղիները և նրա հատկանշական գծերը (գրոտեսկ, հիպերբոլիզմ, բուֆոնյան կոմիքներ): Ռաբլեյի տեղը յեվրոպական Վերածնունդի գրականության մեջ: «Պլեազայի» բանաստեղծների ստեղծագործությունները: Ռոնսարի պոեզիան, հումանիզմը: Անտիկ պոետների ոգտագործումը: Դյու-Բելլի արախատուր ֆրանսիական լեզվի մասին: Կլասիկական հոսանքի ձևավորումը ֆրանսիական գրականության մեջ: Վերջին մեծ հումանիստ Մոնտեյնը և նրա «Փորձերը»:

4. XVI—XVII դարերի իսպանական և փոքրագալական գրականությունը

Թագավորական իշխանության պայքարը խոշոր ֆեոդալների և քաղաքների դեմ: Մարքսը իսպանական արտոլյուտիզմի առանձնահատկությունների մասին: Յեկեղեցու դերը վորպես «ամենասարսափելի գործիքի իսպանական արտոլյուտիզմի ձևում» (Մարքս): Դադուլթային եքսպանսիա: Յերկրում տեղի ունեցած քաղաքական և տնտեսական ճգնաժամը XV դարի վերջում և XVII դարում: Իսպանական գյուղի աղքատացումը և մահացումը: Գյուղացիական ապստամբությունները XVI և XVII դարերում: Ինկվիզիտորական դատարանների գործունեությունը ուժեղանալը:

Կամոնո—փորթուգալական խոշորագույն բանաստեղծը: Նրա «Լուդիադա» պոեմը: Վասկո-դե-Գամայի եքսպլիցիտայի նկարագրությունը: Իսպանական պալատական-արիստոկրատական գրականությունը XVI դարում: Ասպետական վեպը («Ամադիս Դադիացին»): Հովվական վեպը (Մոնտեմայորի «Իխանա»-ն): Մավրիտանական վեպը: Պիկարոյական վեպը և նրա դեմոկրատական տենդենցները («Տորմեսայի Լատարիտն»): Պոետների հին-լատտիկական և իտալական դպրոցները: Դոնգորան և պրեցիոզ պոեզիան Իսպանիայում: Ժողովրդական ստեղծագործությունը:

Իսպանական գրականության խոշորագույն գրող Սերվանտեսի ստեղծագործությունները: Սերվանտեսի կապը իսպանական ամբողջ նախընթաց և նրան ժամանակակից գրականության հետ: «Դոն-Քիշոտը» վերպես ասպետական վեպի դեմ ուղղված պարոդիա: Պիկարոյական վեպի արձագանքները «Դոն-Քիշոտի» մեջ: «Դոն-Քիշոտի» սեպտեմբեր և հունվանիզմը: Իսպանիայի գյուղացիության կյանքի ընդարձակ պատկերը XVI և XVII դարերում: «Դոն-Քիշոտի» կերպարի սոցիալ-փիլիսոփայական և հումանիստական իմաստը: «Դոն-Քիշոտի» մեկնաբանության պատմությունը: Ստալինը դոն-քիշոտության մասին: Սերվանտեսը վերպես նովելիստ («Խրատական նովելներ») և դրամատուրգ (ինտերմեդիաներ, «նումանսիա»):

Իսպանական դրամայի զարգացումը և նրա եռագյուղները: Լոպե դե-Վեգայի դրամատուրգիան: Նրա պաշտարք կլասիցիզմի դեմ: Իսպանական ազգային դրամայի—«Վոսկե դարի» սկզբունքները հիմնավորումը: Ստեղծագործության բազմազանությունը: Նրա թատրոնի ժողովրդական և հումանիստական տարրերը: Լոպե դե-Վեգայի սեպտեմբեր և հունվանիզմը: Ժողովրդական կյանքի վերարտադրությունը: «Վոչիարի աղբյուրը» պիեսի վերլուծությունը: Տիրսո դե-Մոլինայի ստեղծագործությունները: «Սեվիլյան շարձը-ձին կամ Բարի հյուրը» և Դոն Ժուանի կերպարի վարիանտները յեվրոպական գրականության մեջ: Կալդերոնի և նրա գալոցի դրամատուրգիան: Ռեալիզմը և իրոնիալիզմը Կալդերոնի ստեղծագործություններում: Կալդերոնի դրամատուրգիայի առանձնահատկությունները Լոպե դե-Վեգայի համեմատությամբ: Կալդերոնի փիլիսոփայական և հերոսական դրամաները («Կայուն Գրինցը», «Կյանքը յերազ է» և մյուսները): Թիլիսոցի և սրի Լամբերտի: «Սանթեյան ալիալը»—ժողովրդական կյանքի և Ֆեդայական կամայականությունների ընդարձակ պատկեր: Իսպանական թատրոնի անկումը XVII դարի վերջին:

5. Վերածնությունը Անգլիայում

Անգլիայի պատմական վիճակը XIV—XVI դարերում: Կապիտալիստական հարսերությունների զարգացումը: Ազդարարչին հեղաշրջումը: Հողերի բռնագրավումները կալվածատերերի

կողմից (огораживания) և դյուղացիություն հողազրկումը: Երազնավականությունը: Հողազրկվածների դեմ ուղղված արյունառերենագրությունը: Գաղութային զավթումների սկիզբը: Թագավորական իշխանությունը և պարլամենտը թյուզորների ժամանակ: Ռեֆորմացիա և սեկուլյարիզացիա: Գյուղացիական շարժումները: Արտլյուսիստական սեփմի ճգնաժամը XVI դարի վերջին: Անգլիական գրականությունը XIV—XVI դարերում: Ռենեսանսի (Վերածնություն) նախորդները: Զոսերը և նրա «Կենտեբերյան պատմվածքները»: Անգլիական հումանիզմը և նրա առանձնահատկությունները: Թոմաս Մորի կյանքը և գործունեությունը: Գյուղացիության եքսպլոատրիացիայի քննադատությունը «Ուտոպիայում»: Իշխող դասակարգերի դժգոհությունների մերկացումը: Պետական որենքների քննադատությունը: Հասարակական կառուցվածքը «Ուտոպիայում»: Թոմաս Մորը և ժողովրդական իդեալները: «Ուտոպիա»-ն իբրև գրական հուշարձան: Ժողովրդական բալլադներ Ռորին Հուզի մասին և նրանց կապը XV—XVI դարերի գյուղացիական շարժումների հետ: Ռենեսանսյան պոեզիան: Սպենսերը և նրա «Մեյաների թագուհի»-ն: Հովվերգական ժանրը Սիդնեյի ստեղծագործություններում, Սերբեյի պետարկիզմը: Կենցաղային-սեպտեմբերական վեպի սկիզբը (Նեշ): Ինլանդի կենցաղագրական վեպերը: Բեկոնի «Նոր Ատլանտիդա» սեպտեմբերական վեպը և նրա կապը Բեկոնի գիտական-փիլիսոփայական հայացքների հետ (Ճշգրիտ գիտությունների, հայանագործությունների, գյուտերի ապոթեոզը (փառաբանությունը):

Թատրոնի և դրամայի ծաղկումը XVI—XVII դարերի սանձանագծին: «Յեղիսարեթականները» և նախաշեքսպիրյան դրաման Անգլիայում: Հեյուզի «Ինտերմեդիան» և Իբենի «Իաշի պահակը»: Մարլոյի տրագեդիան—«Թամբուլան», «Փաուստ» և մյուսները: Տիտանական անհատի, ազատամտության, աթիստական գծերի փառաբանությունը: Լիլին և Կլիֆորդը (մանեքային—ճոռոմ վոն, փորը հաստատվեց XVI դարի անգլիական գրականության մեջ Լիլիի «Եվֆուռեզ» վեպով): Լիլիի «պրեցիոզ» (ճոռոմ) մաներայի աղբյուրությունը «Յեղիսարեթականների» վրա: Հումանիզմը Բեն Զոնսոնի ստեղծագործություններում: Ռեալիզմի պաշտպանությունը: Բեն Զոնսոնի «յուսմոնի»

Մոլիերի պայքարը սեպտեմբրի համար՝ բեմական կուլուրայի ասպարիզում: Դիմումն էին ժողովրդական ֆարսի պլերեյական-լիարյուն կոմիդիին: Վաղ Մոլիերը: Նրա շրջագրածը վաղ ֆարսերից դեպի սոցիալ-հոգեբանական և սատիրական կոմեդիան («Տղամարդկանց դպրոցը», «Կանանց դպրոցը») և այդ կոմեդիաների շուրջը տեղի ունեցած տաք բանավեճը: Մոլիերի ցուցաբերած անկախ վերաբերմունքը կասիցիդի կանոնների նկատմամբ «Կանանց դպրոցի» «Քննադատություն» մեջ: Հասուն Մոլիերը — «Տարսյուֆ», «Ինն ժուան», «Միզանտրոպ», «Ժլատը», «Քաղքենին աղնվական»: Մոլիերը վորպես ֆեոդալական մաքորդները մերկացնող սատիրիկ: Մոլիերը և հումանիզմը: Բուրժուազիայի քննադատությունը հումանիզմի դիրքերից: Մոլիերի դրամատուրգիայի ժողովրդական գծերը: Մոլիերը և իտալական դրամաների կոմեդիան: Սոցիալական կոմեդիաներին վերաբերող ժանրերի մեջ հանդես յեկող խարակտերների մշակման խորացումը: Հասուն Մոլիերի ֆարսերը — «Սկամա բժիշկ», «Սկապենի արարքները»: Մոլիերը և Գասենդիի մատերիալիստական փրկոսոփայությունը: Մոլիերը և նրա ազդեցությունը յեվրոպական կոմեդիայի հետագա զարգացման վրա: Մոլիերը և ողա գրականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

I. Գեղարվեստական գրականություն

1. Шор Р. О.—Хрестоматия по литературе средних веков. Учпедгиз, М. 1938.
2. Ирландские саги.—Перевод А. Смирнова, изд. «Академия». Изд. 2-ое, 1938 г.
3. Эдда—Перевод Свириденко, изд. Сабашниковых, М., 1917.
4. Древне-скандинавский народный эпос (в серии «Русская классная библиотека», под ред. А. Чудинова, вып. IV).
5. Саги о Волфунгах.—Изд. «Академия» 1934.
6. Песнь о Роланде—Изд. «Академия» или перевод Де ля-Барта.

7. Песнь о Нибелунгах—перевод М. Кудряшова, СПб 1889.
8. Бедье—«Роман о Тристане и Изольде», М. 1918, изд. ГИХЛ Ленинград, 1938.
9. Пайен из Мезьера—«Мул без узды», перевод Е. Васильевой, изд. «Академия», 1934.
10. Окассен и Николлет.—перевод М. Ливоревский, изд. «Академия», 1935.
11. Данте—«Новая жизнь», изд. «Академия» 1934.
12. Данте—«Божественная комедия», ч. I, перевод Мина Д. (2-ое изд.). СПб, 1909 (или Голованова).
13. Петрарка—Избранные сонеты и другие произведения, изд. Сабашниковых, М., 1915.
14. Боккаччо—«Фьямета», перевод М. Кузьмина, 1913.
15. Боккаччо—«Фьезоланские нимфы», перевод Ю. Верховского, изд. «Академия», 1934.
16. Воккаччо—«Денамерон», перевод А. Н. Веселовского, изд. «Академия» (новеллы—I—3, п.,—4, IV—1, 9, VI—9, VI—10, VII—7, VIII—4, X—10).
17. П. Муратов—Новеллы итальянского Возрождения, 2 тома, М., 1922.
18. Полициано—«Сказание об Орфее», перевод С. Шервинского, изд. «Академия», 1933.
19. Поджо Браччолини—«Фацетин», перевод А. Дживелегова, изд. «Академия», 1934.
20. Ариосто—«Неистовый Роланд» Госизд. «Худ. лит.» 1938.
21. Тассо—«Аминта», изд. «Академия», 1938.
22. Тассо—«Освобожденный Иерусалим», перевод Д. Мина, СПб, 1899.
23. Письма темных людей.—перевод Н. Куна, изд. «Академия» 1935.
24. Эразм Роттердамский—«Похвальное слово глупости, изд. 1938.
25. Деперье—«Кимвал мира», «Новые забавы», перевод В. Пикова, изд. «Академия», 1936.

26. Рабле—«Гаргантюа и Пантагрюэль», перевод В. Паста, ЗИФ, 1929 и ГИХЛ 1938.

27. Ронсар—Избранные стихотворение, перевод С. Шервинского, М., 1926.

28. Комоэнс—«Лузиада». В серии «Русская классная библиотека», вып. 6, СПб, 1897.

29. Жизнь Ласариллю из Тормеса,—перевод К. Державина, изд. «Академия», 1931.

30. Сервантес—«Дон Кихот», перевод Б. Кржевского и А. Смирнова, изд. «Академия».

31. Сервантес—«Назидательные новеллы», перевод Б. Кржевского, изд. «Академия», 1934.

32. Сервантес—«Интермедии», перевод Н. А. Островского.

33. Эспинель—«Маркос Обрегон», перевод С. Игнатова, изд. «Академия», 1935.

34. Лопе де-Вега—«Овечий источник», «Наказание не мщение», «Собака садовника» (в собрании соч. Лопе де-Вега, т. 1—3, СПб, 1913—1914 г. г.).

35. Тирсо де-Молина—«Театр», изд. «Академия», 1935.

36. Кальдерон—«Жизнь есть сон» или «Стойкий принц»; «Врач своей части» и др. (Кальдерон, соч., три тома, перевод К. Бальмонта), «Саламанский алькаль» (в серии библиограф. европейск. писателей и мыслителей, под ред. Чуйко, СПб, 1884).

37. Томас Мор—«Утопия», перевод А. Малкина, изд. «Академия», 1935.

38. Марло—«Трагическая история доктора фауста», перевод К. Бальмонта, М., 1912.

39. Бен Джонсон—Драматические сочинения, 2 тт., изд. «Академия», 1932—1933.

40. Бен Джонсон—«Эписии или Молчаливая женщина», перевод Е. И. Р. Блох, П. 1921.

41. Шекспир—«Двенадцатая ночь», «Сон в летнюю ночь», «Виндзорские кумушки», «Два шута».

«Ричард III», «Юлий Цезарь», «Тит Андроник», «Урф», «Урф», «Буря», изд. Брокгауза и Ефрона. Однотомник ГИХЛ, 1934 г. избр. пьесы 2 т. т. в издании «Академия» или в новом полном собр. соч. выходящий в изд. «Академия».

42. И. Аксенов—«Елизаветинцы» сборник (Пьесы Форда, Вебстера, Тернера (М. 1916 г.)

43. Мильтон—«Потерянный рай», перевод Е. Кудашевой, С. Чьюминой или Шульговской (прозаический перевод).

44. Корнель—Сид (перевод Лиханчева, новое изд. ГИЗ 1931) или Гораций (перевод М. Чайковского, СПб 1893 г.).

45. Расин—«Федра. Гофолия» (в Русской классной библиотеке, вып. 26-й, СПб 1903) а также 1-й том. избр. соч. Расина в изд. «Академия» 1937 г.

46. Мольер—«Мещанин во дворянстве», «Скупой», «Тартюф», «Дон Жуан», «Мизантроп», «Лекарь по неволе» (изд. Брокгауза-Ефрона или полн. собр. соч. в изд. «Академия», 2 т. т.).

47. Буало—«Поэтическое искусство», перев. С. Нестеровой.

48. Сорель—«Правдивое комическое жизнеописание франсисона», изд. «Академия» 1935 г.

49. Скаррон—«Комический роман», изд. «Академия» 1934 г.

50. Пуришев—«Хрестоматия по западно-европейской литературе эпохи Возрождения и XVII век.», Учпедгиз, 1937 г.

51. С. Мокульский—«Хрестоматия по истории западно-европейского театра, ч. I, средневековый театр, эпохи Возрождения», М. 1937 г.

ПОСОБИЯ (ՊԱՐՏԱԿԻՐ)

1. Մարգարե և Ենգերլը արվեստի մասին:

2. Гвоздев—История западно-европейской литерату-

ры—Средние века и Возрождение, Учпедгиз, 1935.

3. Луначарский А.—Западно-европейская литература в ее важнейших моментах, т. I, 1930 г.

ПОСОБИЯ (ՀՈՉ ՊԱՐՏԱԴՐՐ)

1. Н. Стороженко—Очерки по истории западно-европейской литературы, М. 1916 г.

2. Де ля-Барт Ф.—Беседы по истории всеобщей литературы, т. I, Средние века и Возрождение, М. 1914 г.

3. Коган П.—Очерки по истории западно-европейской литературы, т. I, М. 1931 г.

4. Фриче—Очерк развития западных литератур, М. 1931 г.

5. Мокуньский—История западно-европейского театра, т. I, М. 1930 г.



ՀՀ Ազգային գրադարան



NL0166509

825 0

Faint, illegible text at the top of the page, possibly a header or title.

Main body of faint, illegible text, appearing to be several lines of a document or list.

